ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի բյուջեի ձևավորումը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով, և ավելացնելով հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված նպատակային ծախսերը: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման, տեխնիկական հագեցվածության, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին, իսկ բյուջեի 1%-ի չափով հաշվարկված գումարն (բացառությամբ հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված նպատակային ծախսեր) ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Ծրագրի անվանումը՝ **հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում** Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումները՝	Գումարը (հազ.դրամ)
1. Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում	
Ընթացիկ ծախսեր, այդ թվում	**1 024 388.7**
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	720 883.7
Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, ներքին և արտասահման գործուղումների , անդամավճարների, հարկերի և պարտադիր վճարների համար նախատեսված ծախսեր	303 505.0
2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ այդ թվում	**5 633.0**
վարչական սարքավորումներ	5 633.0
3. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ այդ թվում	**10 000.0**
տրանսպորտային սարքավորումներ	10 000.0
Ընդամենը ծախսեր	**1 040 021.7**
4. Էներգետիկայի բնագավառում նախորդ տարվա ընթացքում իրականացված ներդրումների տեխնիկական աուդիտի իրականացում	**69 000.0**
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ	**1 109 021.7**